ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

20.02.2024

«ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
ՀՀ, ք. Երևան, Գրիգոր Լուսավորչի 13 և 13/1,
հեռ. (+374 12) 22 22 22, ֆաքս(+374 10) 59 05 82
էլ. փոստ՝ ashb@ardshinbank.am
կայք՝ www.ardshinbank.am

«Արդշինբանկ» ՓԲԸ բաժնետերերի 2024 թվականի հունվարի 22-ի արտահերթ ընդհանուր ժողովը թիվ 2024-1-3 Լ որոշմամբ որոշել է՝

1) «Արդշինբանկ» ՓԲԸ «Նախորդ տարիների շահույթ/վնաս» հաշվեկշռային հաշվից (կուտակված շահույթ) բաշխել շահութաբաժիններ 50,227,200,000 (հիսուն միլիարդ երկու հարյուր քսանյոթ միլիոն երկու հարյուր հազար) ՀՀ դրամ չափով:

2) Շահութաբաժիններն ամբողջությամբ բաշխել «Արդշինբանկ» ՓԲԸ բաժնետերերին՝ ըստ «Արդշինբանկ» ՓԲԸ կանոնադրական կապիտալում նրանց ունեցած մասնակցության համամասնությունների:

3) Շահութաբաժինների վճարումն իրականացնել համապատասխան գումարը «Արդշինբանկ» ՓԲԸ բաժնետերերի բանկային հաշիվներին փոխանցելու կարգով՝ պայմանով, որ դա չի հանգեցնի «Արդշինբանկ» ՓԲԸ կողմից օրենսդրական և պայմանագրային պարտավորությունների խախտման: Վճարումները իրականացնել օրենսդրական և պայմանագրային խախտման բացակայության հանգամանքը «Արդշինբանկ» ՓԲԸ ֆինանսական դեպարտամենտի կողմից հաստատվելուց հետո:

4) Շահութաբաժինների վճարումն իրականացնել սույն որոշման ուժի մեջ մտնելու օրվանից 120 (հարյուր քսան) աշխատանքային օրվա ընթացքում՝ համապատասխան գումարը «Արդշինբանկ» ՓԲԸ հասարակ անվանական բաժնետոմսերի այն սեփականատերերի բանկային հաշվին փոխանցելու կարգով, ովքեր ընդգրկվել են 22.01.2024թ.-ին կայացած «Արդշինբանկ» ՓԲԸ բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակում: